# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 73142, katnaghbyur.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 18

## ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ համայնքի ավագանին ՈՐՈՇԵՑ.

Հաստատել թիվ 6 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. Կաթնաղբյուր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ
2. Համայնքի ղեկավարի 2-րդ եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդում
3. Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 73142, katnaghbyur.aragatsotn@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 19

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48-րդ հոդվածի 4-րդ մասով, 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, 81-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգի 44-րդ կետի <<ը>> ենթակետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և հաշվի առնելով <<ԱՎ-ՍԹՈՆԵ>> ՍՊԸ-ի տնօրենի դիմումը, համայնքի ավագանին ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 6.64808 հա (սույն որոշմանը կից հատակագծին համապատասխան) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության արտավայր և վարելահող հողատեսքեր ունեցող հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 02-057-0108-0856-ից, վկայական՝ 04092018-02-0017) վարձակալության իրավունքով, մինչև 2021 թվականի օգոստոսի 13-ը, տարեկան 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել <<ԱՎ-ՍԹՈՆԵ>> ՍՊԸ-ին երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով՝ ԵՀԹ-29/284 երկրաբանական ուսումնասիրության թույլտվությանը համապատասխան.

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող ՀՀ օիրենսդրությամբ սահմանված համապատասխան գործողություններ.

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 731 42, katnaghbyur.aragatsotn@ mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 20

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով և բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ համայնքի ավագանին ՈՐՈՇԵՑ.

Կաթնաղբյուր համայնքի 2019 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդագրությունն ընդունել ի գիտություն.

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Կաթնաղբյուր, (0249) 73142, katnaghbyur.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 21

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի Ն-599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 24-ի Ն-50 դրական եզրակացությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել ՀՀ Արագաժոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման և դրան համապատասխան՝ ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքի վարչական տարածքում գտնվող, իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող 6.3598 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-057-0108-0859) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության արոտավայր հողատեսքից 6.0003 հա փոխել և դարձնել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության էներգետիկայի հողեր գործառնական նշանակության՝ արևային ֆոտովոլտակայան կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ԺԻՐԱՅՐ

ՏՈՆՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 05300695 * ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ